11422

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարարի
պարտականությունները կատարող
Արամ Մեյմարյան

«09» 10 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 235 - 25

Նախաձեռնող՝ ***«Պոստեռում» ՍՊԸ***
ք. Երևան, Ձորափի 2

Գործունեությունը՝ ***Երևան քաղաքի Հնդկաստանի փողոց 2 հասցեում հասարակական շենքի կառուցում***
Քաղաք Երևան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 235 - 25
« 09 » 10 2025թ.

Երևանի Հնդկաստանի փողոց 2 հասցեում նախատեսվող հասարակական շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող	«Պոստեռում» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն (ՇՄԱԳ)
Գործունեությունը	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը	Քաղաք Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Համաձայն փորձաքննության ներկայացված գնահատման հաշվետվության (այսուհետ՝ Հաշվետվություն) և նախագծային փաստաթղթի՝ «Պոստեռում» ՍՊԸ-ի կողմից Երևանի Հնդկաստանի փողոց 2 հասցեում նախատեսվում է հասարակական շենքի կառուցում (այսուհետ՝ Շենք):

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի /այսուհետ՝ Օրենք/ 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթակա քաղաքաշինության բնագավառում որպես քաղաքաշինական գործունեության օբյեկտի կառուցում, քանի որ գերազանցում է 15.000 քմ և ավելի ընդհանուր կառուցապատման մակերեսը:

Շենքի կառուցումը նախատեսվել է իրականացնել Երևան համայնքի կողմից 2025թ. մարտի 6-ին տրված N «ՆԹ-1090-25» նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) պահանջներին համապատասխան, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով գրանցված 0.18738 հա մակերեսով հողամասում՝ (կադաստրային ծածկագիրը՝ 01-006-0503-0155), որի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ հասարակական կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Դիտարկվող տարածքը գտնվում է Կենտրոն վարչական շրջանի տարածքում և գտնվում է խիտ կառուցապատված միջավայրում: Ընդգրկում է Ձորափի, Պարոնյան և Ձորագյուղ փողոցների միջանկյալ մասը:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տեղամասը տեղադրված է Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանի կենտրոնական մասում: Հրազդան գետի V-աձև խորը կիրճի ձախափնյա հատվածում մասամբ ընգրկում է նաև Կոնդի բլրաշարի հարավային էռոզիոնահողմնահարման լանջերը: Գեոմորֆոլոգիական տեսակետից հետազոտվող տարածքում համատեղվում են ռելյեֆի 3 հիմնական գենետիկական տիպերը՝ տեկտոնա-հրաբխային, էռոզիոն և կուտակումային: Մակերեսի բացարձակ նիշերը տատանվում են 1000.0-1003.0 մետրի սահմաններում: Հորատման աշխատանքների ընթացքում մինչև 40.0 գծամետր խորությունը ստորգետնյա ջրեր չեն բացահայտվել, սակայն հարկ է նշել. որ թիվ 2 հորատանցքի սահմաններում 18.0-21.0 միջակայքում դիտվել են գերխոնավ տեղամասեր:

02543163 ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ COMMISSION OF EXPERTS

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում նախագծվող կառույցի վրա, բացակայում են:

Նախատեսվող գործունեության տարածքում ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բույսեր և կենդանիներ, բնության հուշարձաններ և հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Նախատեսվող գործունեության տարածքում առկա են ռեստորանային շինություն (788.3 քմ) և ինքնակամ շինություն (239.8 քմ), որոնք նախատեսվում է ապամոնտաժել: Տարածքի հարևանությամբ 17- 80 մ հեռավորության վրա գտնվում են հասարակական և բնակելի շենք-շինություններ, բազմագործառութային բարձրահարկ շենքեր: Գործունեության հարակից տարածքում է գտնվող Արամյանց բժկական կենտրոնը:

Դիտարկվող և հարակից տարածքում տեղ-տեղ հանդիպում է թփային բուսականություն և ծառեր, որոնք նախատեսվում է հատել:

Շենքի կառուցապատման տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են.

- ✓ Հողակտորի մակերես — 0.18738 հա,
- ✓ Կառուցապատման ընդհանուր մակերես — 470.0 մ^2,
- ✓ Կանաչապատման մակերես — 460.0 մ^2,
- ✓ Սալահատակներ և ճանապարհներ — մոտ 943.8 մ^2,
- ✓ Շինության վերգետնյա մակերես — 15577 մ^2,
- ✓ Շինության ստորգետնյա մասի մակերես — 5223.0 մ^2,
- ✓ Շինության ստորգետնյա և վերգետնյա մասերի համագումարը կազմում է -20800 մ^2,
- ✓ Ապարտամենտների ընդհանուր քանակ — 90 հատ,
- ✓ Ավտոկայանատեղիի ընդհանուր քանակ — 66 հատ,
- ✓ Թույլատրելի հարկայնությունը — ստորգետնյա հարկեր, մինչև 16 վերգետնյա հարկ,
- ✓ Շինության թույլատրելի բարձրությունը — մինչև 55.0 մ:

Մուտք ու ելքը կազմակերպվելու է Հնդկաստանի և Պարոնյան փողոցներից: Տարածքում զարգացած է փողոցային ցանցը, կից առկա են բոլոր անհրաժեշտ քաղաքային ցանցերը՝ ջուր, կոյուղի, էլեկտրամատակարարում և հեռահաղորդակցություն:

Ստորգետնյա հարկն ունի 1741.0 մ^2 մակերես, ինչը կազմում է հողամասի մակերեսի շուրջ 97.6 %-ը: Նկուղային հարկերում տեղակայված են նաև անհրաժեշտ տեխնիկական սենյակներ՝ ջրի ռեզերվուարներ, պոմպակայան, էլեկտրական ենթակայան, հաշվիչների արկղերի և վահանակների սենյակներ: Տարածքի բարձրությունը տատանվում է 3.45 մ-ից մինչև 4.7 մ: Հասարակական շենքի -1 հարկում նախատեսված է 12 մեքենայի էլեկտրական լիցքավորման կայաններ: Ավտոկայանատեղիի մուտքը նախատեսված է Հնդկաստանի փողոցից 66 մեքենայի համար: Ստորգետնյա ավտոկայանատեղին նախագծված է առանձնացված տեղամասերով, որոնք միմյանցից անջատվում են հակահրդեհային պատերով և դարպասներով:

Շինության 53.4 մ նիշից վեր տեղակայված են կաթսայատունը, տեխնիկական սենքերը և աստիճանավանդակային հանգույցը:

Շինաշխատանքների իրականացման համար նախատեսվում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական, ընդհանուր տևողությունը կազմելու է 48 ամիս:

Աղմուկ առաջացնող աշխատանքներն իրականացվելու են օրվա ցերեկային ժամերին:

Բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից:

Շինարարության ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

02543163
ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը կկազմի 8601.5 մ³/օր:

Շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող սանհանգույցից՝ բիոզուգարանից, շինարարական հոսքաջրերի համար կառուցվելու է ժամանակավոր սեպտիկ հոր: Բիոզուգարանի և սեպտիկ հորի մաքրումը կատարվելու է մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

Համաձայն հաշվետվության՝ շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվելու են շինարարական մեքենաներ և մեխանիզմներ՝ ավտոկռունկ, բետոնատար ինքնաթափ, եռակցման սարք, շարժական կոմպրեսոր, էքսկավատոր և այլն:

Կառուցապատման աշխատանքները ենթադրում է հողային աշխատանքների իրականացում: Ե/բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 38000 մ³ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ, որից 11500 մ³ կատարվելու է հետլիցք:

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանալու են տարբեր տեսակի թափոններ՝ կենցաղային աղբ և շինարարական աղբ, փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր նյութերով չաղտոտված հող 26500 մ³ ծավալով: Շինարարական աղբը և հողն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր:

Համաձայն հաշվետվության՝ տարածքում հողի բերրի շերտ առկա չէ: Պահանջվող 300 մ³ ծավալով բերրի հողի ձեռքբերման վայրը և պայմանները կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Համաձայն Հաշվետվության շինարարական աշխատանքներից հետո նախատեսվում է իրականացնել բարեկարգում՝ քաղաքաշինական և լանդշաֆտային պահանջներին համապատասխան: Տարածքում ներառված են ինչպես կանաչապատ հատվածներ, այնպես էլ սալահատակ անցուղիներ և հանգստի գոտիներ: Բարեկարգման ծրագրով նախատեսվում են՝ կանաչապատ տարածքներ՝ ընդհանուր հողամասի առնվազն 24.5 %-ը, ներառյալ ծառատեսակներ, թփեր և խոտածածկ հատվածներ, բացօթյա հանգստի գոտիներ՝ նստարաններով և լուսավորությամբ ապահովված տարածքներ, սալահատակ և հետիոտնային հատվածներ՝ հարմարեցված սայլակների, հաշմանդամների և հեծանվային երթևեկության համար:

Նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց: Ոռոգումն իրականացվելու է ցնցուղային եղանակով, նաև նախատեսված են ռետինե խողովակներ՝ ամբողջությամբ ոռոգում կազմակերպելու համար:

Նախատեսվող գործունեության ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային, բետոնային աշխատանքների, հողային զանգվածների և թափոնների տեղափոխման, նյութերի օգտագործման, շինարարական տեխնիկայի ու մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ: Համաձայն Հաշվետվության՝ նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանմանը, դրանց արդյունավետ օգտագործմանը, թափոնների կառավարմանը, աղմուկի մակարդակի ու արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում, այդ թվում՝

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով ջրցանի կատարում՝ օրական 2-3 անգամ,

02543163
ՓՈՐՁԱԲՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,

- շինհրապարակի ցանկապատում, կառուցվող շենքերի ծածկում համապատասխան բարձրության ցանցով՝ փոշու արտանետումները նվազեցնելու նպատակով,

- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրության թաղանթով,

- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,

- սորուն նյութերի պահումը հատուկ տակդիրների վրա՝ շրջակա միջավայր հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- վտանգավոր արտահոսքերի դեպքում անմիջապես կլանիչ նյութերով մաքրում,

- մեքենաների և տեխնիկայի լվացումը կատարվելու է շինհրապարակից դուրս՝ համայնքում գործող մասնագիտացված կետերում,

- տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ լցակայաններում կամ սպասարկման կետերում,

- բոլոր մեքենաների վրա համապատասխան խլացուցիչների տեղադրում՝ աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով,

- շինարարության ընթացքում թափոնների տարանջատումը շինհրապարակում,

- տնկված ծառերի և խոտածածկի խնամք և մոնիթորինգ,

- մթնոլորտային օդ արտանետումների (փոշի, CO, NOx և այլն) որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,

- օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերը հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,

- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,

- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվել է տարեկան 2380 հազար ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է գործող ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

Գնահատման արդյունքում վերլուծվել են հնարավոր անցանկալի բնապահպանական ազդեցությունները շրջակա միջավայրի բաղադրիչների և բնակչության առողջության ու սոցիալ-տնտեսական պայմանների վրա, մշակվել են ազդեցությունների նվազեցման և կանխարգելման հիմնական ուղղությունները:

Շրջակա միջավայրի վրա բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են շինարարության փուլում և կրելու են ժամանակավոր բնույթ:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, Երևանի քաղաքապետարանը, Կենտրոն վարչական շրջանը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, որոնց կարծիքները, առաջարկությունները և դիտողությունները ևս հաշվի են առնվել փորձաքննական գործընթացում:

Ստացված կարծիքներն ամփոփվել են և փորձաքննական կենտրոնի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած մի շարք դիտողությունների հետ միասին ներկայացվել են լրամշակման:

Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գնահատման և փորձաքննության փուլերում Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի է ունեցել 2 հանրային լսում:

Փորձաքննական պահանջներ

- Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում՝ նախատեսել լրացուցիչ միջոցառումներ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:
- Նախատեսվող շինարարական աշխատանքները կատարել օրվա սահմանված ժամերին՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով հարակից տարածքում բժշկական հաստատության և բնակելի տարածքներում աղմուկի և ճանապարհների առավելագույն բեռնվածությունը:
- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների, այդ թվում նաև վտանգավոր թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
- Ապահովել հաշվետվությունում ամրագրված 24.5% նախատեսված կանաչապատման աշխատանքների իրականացումը և խնամքը: Գործունեության տարածքում առկա ծառերի հատումը համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի հետ:
- Կառուցապատման աշխատանքների ընթացքում պահպանել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածով սահմանված պահանջները:
- Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N438 որոշման պահանջով, գործունեության իրականացման ընթացքում պատմամշակութային արժեք ունեցող կամ հնագիտական շերտերի հայտնաբերման դեպքում, դադարեցնել աշխատանքները՝ տեղյակ պահելով ոլորտը կարգավորող լիազոր մարմնին: Աշխատանքները վերսկսել լիազոր մարմնի թույլտվությունից հետո:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Պոստեռում» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված՝ Երևան քաղաքի Հնդկաստանի փողոց 2 հասցեում նախատեսվող շենքի կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան